



Հետազոտության վերնագիր՝  
**Միամանրոյի «Դյուցազնորենը».  
ոճը եւ պատկերավորման  
արվեստը 11-րդ դասարանում**

Ներկայացնող Ջարուհի  
Մարտիրոսյան Ջարթոնքի  
միջն.դպրոց

Մենթոր՝ Լյուբա Հայրապետյան

# Բովանդակություն

Ներածություն.....	3-5
Միամանթոյի «Դյուցազնորենը». ոճը եւ պատկերավորման արվեստը.....	6-11
Եզրակացություն.....	12
Գրականության ցանկ.....	13

# Ներածություն

## Հետազոտության արդիականություն

Առ այսօր քիչ բանաստեղծներ ունենք, որոնք այդքան մոտիկից քայլեն իրենց ժամանակի հետ, դառնան իրենց ժամանակի շունչը, վերցրած լինեն ժողովրդից եւ վերադարձրած լինեն նրան եւ ամենակարեւորը՝ մեր ճակատագրի ու արյան պատմությունը բառի վերածեն մի այնպիսի ուժով, որ <<արյան փոթորիկ>> է ստեղծում՝ մեզանից ամեն մեկի մեջ ոտքի պահելով մեր ցասումը, վրեժխնդրությունն ու ընդվզումը թուրքական բարբարոսության եւ մարդկային ազատության բռնաբարման դեմ:

Այդ քչերից մեկը Միամանթոն է (Ատոմ Յարճանյան)՝ 20-րդ դարի ողբերգակ բանաստեղծը: Ողբերգակ, որովհետեւ << այդ քերթողը մեր առհավական ճակատագրեն ու ցեղային ողբերգությունեն կ'առնե իր աշխարհը... ինքնատիպության ալ զորեղ շեշտով մը >>: 1 Իսկապես ինքնատիպ, մի հատկանիշ, որով նա դառնում է բանաստեղծական բացառիկ երեւույթ: Ժամանակի գրական քննադատները հենց այդպես էլ արժեքավորեցին նրան. Կարո Սասունի Միամանթոն բանաստեղծի վերլուծությունը սկսում է այսպիսի գնահատմամբ. << Ատոմ Յարճանյանի ինքնատիպ դեմքը մեր նոր բանաստեղծության հորիզոնին վրա բացառիկ երեւույթով մը կը բացվի: Միամանթոն բացառիկ տիպ մըն է բանաստեղծներու խումբին մեջ: Ինչպես բանաստեղծը ինքնահատուկ է, իր բանաստեղծությունն ալ նույնքան եւ առանձնահատուկ տեղ մը կը գրավե հայ բանաստեղծության շարքին մեջ >>: 2 Իրավ, Միամանթոն բացառիկ ինքնատիպությամբ փայլում է մեր ազգային բանաստեղծության մեջ, Իսահակյանի բնութագրմամբ՝ << ունիկում համաշխարհային պոեզիայում >>:

Իր ինքնատիպությամբ Միամանթոն բանաստեղծական նորագույն եւ բարդ երեւույթ էր, ու կրկնել նրան շատ դժվար է, եթե չասենք՝ անհնարին: Նրա բանաստեղծության այս կողմի նկարագիրը տվել է նաեւ արեւմտահայ գրականության պատմաբան Մեսրոպ Ճանաշյանը. << Միամանթոնի բանաստեղծությունները մեր գրականության մեջ նորության մը պես ողջունվեցան, որովհետեւ անոնք ուժեղ անհատականություն մը կը բերեին իրենց հետ >>:

Ինչո՞վ է ինքնատիպ բանաստեղծը: Միանգամից կարող ենք ասել, որ Միամանթոն ինքնատիպ է նախ եւ առաջ իր ոճով, առանձնահատուկ եւ նոր ոճ մեր գրականության մեջ՝ կախված ողբերգության թեմայի գաղափարական ընկալման գեղարվեստական վերարտադրման յուրահատկության հետ:

<<Ազգային աղետի ռազմաշունչ ողբերգակ>>,- նաեւ այսպէս է բնութագրում  
բանաստեղծին Մ.Ճանաշանը.ինչու ողբերգակ այս մասին գրում է Դ.  
Վարուժանը.<<Ու կը մտնէ ան հայ բանաստեղծութեան ասպարեզը այն օրերուն մեջ,  
ուր հայ տառապանքը իր գագաթնակետին հասեր էր:Վիշտն ու պայքարը միասին ու  
գուգահեռ կ'ակոսէին հայրենի հողը, հայ կյանքը ու Ժնեւը, ուր կապրէր Յարճանյան,  
կեդրոնը կ'ըլլար վայրկյան մը վշտահարներուն եւ ըմբոստներուն >>:1 Եվ  
բանաստեղծը հավերժորեն ուխտեց.<<Իմ գրիչը իրավունք չունի ազգային  
ողբերգոյթունից զատ ուրիշ թեմաներ երգելու>>:Միտք,որ դարձավ նրա գրական  
դավանանքը, գեղագիտական ու գաղափարական սկզբուքը: Հայրենիքի թեման  
ստանում է անհատականացված ձև:Բանաստեղծը նրա մեջ հախուռն է,  
արտահայտելու պահանջը՝ անկաշկանդելի, հորդ եւ տիրական: Նա կարծես կոչված է  
հագուրդ տալու սելեռուն գաղափարներից սկիզբ առնող ու նրա շուրջը պտտվող  
զգայության հոսքին:

Եվ բանաստեղծի աչվներս

արյուն, արյուն, արյուն է որ կտեսնեն...

Բայց թերեւս նա դառնար նաեւ ուրիշ ներշնչումների երգիչ, եթէ ականատես չլինէր  
սոսկալի աղետներին: Այս մասին հաստատ համոզմունքով իր մենագրության մեջ  
գրում է Հրանտ Թամրազյանը. <<Այո՛, Միամանթոն կարող էր երգել բոլոր թեմաներով,  
եթէ միայն ապրէր ուրիշ պատմական շրջանում, այլ հանգամանքների մեջ:

Բանաստեղծութուններում ցրված տեսիլները, գեղեցկության, սիրո եւ աշխատանքի  
երագները դրսեւորում են Միամանթոյի ուժը՝ բոլոր թեմաների ու նվագների մեջ:  
...Քաղաքացիական ու ստեղծագործական ազնվությունը բանաստեղծին մղում է դեպի  
համաժողովրդական ցավերի աշխարհը, կտրելով նրան բանաստեղծության մյուս  
գրավիչ ակունքներից... >>1:

Այս խնդրի հետ կապված նույնպիսի կողմնորոշում ունի Կ. Սասունին: Բանաստեղծին  
համարելով փոթորկալի ժամանակաշրջանի երգիչ՝ գտնում է, որ այդ արագընթաց  
տարիները ժամանակ չտվին <<խորագրաց ու թրթռուն>> հոգի ունեցող Միամանթոյին  
երգել իր սերը, անձնական ապրումներն ու վշտերը: Այս երեւոյթը վերագրելով  
բանաստեղծի անձնական նկարագրին՝ քննադատը միեւնույն ժամանակ համոզված է,  
որ ուրիշ բանաստեղծներ կարող էին հավասարակշռել իրենց՝ երգելով եւ՝ իրենց սերը,  
եւ՝ ազգային պայքարը: Մինչդեռ <<Միամանթոյի բանաստեղծական լարը, այսինքն  
անոր հոգեկան ջիղերն այնպէս պրկված էին հայ ժողովրդի ջութակի վրա, որ միայն  
այդ տարիներու հոգեղեն ձայները կրնային հնչել>>2:

Իսկ հայ ժողովուրդը արյան ու կոտորածի, հերոսական ըմբոստացումի,  
հուսահատական խոյանքի, ազատության բաղձանքի ու մարտական անհուն  
պայքարի ճգնաժամ էր ապրում <<ամբողջովին ու ամենօրյա>>: Իսկ Միամանթոն  
ամբողջ հայության այդ ազատատենչ ապրումներն ու հայ մարտական ոգու աննման  
հանդգնությունները <<կը զգար ներաշխարհային խորունկությամբ, եւ այս նոր  
զգայնության թարգմանը կը դառնար իր նոր բանաստեղծութուններով>>:

Հետազոտության խնդիր:

Հետազոտության խնդիրն է ուսումնասիրել Սիամանթոյի «Դյուցազնորենը». ոճը եւ պատկերավորման արվեստը:

Հետազոտության նպատակ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և բացահայտել

Սիամանթոյի «Դյուցազնորենը». ոճը եւ պատկերավորման արվեստը:

Ջետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտությունը տեսական նշանակություն ունի հիմնախնդրի շուրջ ուսումնասիրություններ կատարողների համար:

Գործնական նշանակությունը առանցքային դեր ունի Գրականության ուսուցչի համար:

# Միամանթոյի «Դյուցազնորենը». ոճը եւ պատկերավորման արվեստը

Միամանթոյի ամբողջական վաստակը ժամանակագրական առումով ընդգրկում է 1894-1896թթ.-ի կոտորոծները, հեղափոխական մեր երկունքն ու ազատագրական շարժման առաջին փայլատակումները, Կիլիկյան աղետը, հայոց լեռների վրա պայթող շղթայազերծ ու տարերային կռիվը եւ նրանց պայքարը, ովքեր ընկան մեր ձորերի մեջ, բարձրացան կախադանների կատարը կամ, առնվազն, որբացան:

Բանաստեծի վրա տիրական ներգործություն ունեցավ ժամանակի գրական-քաղաքական կյանքը: Իհարկե, պոետիկայի շատ առանձնահատկություններ էլ պայմանավորվեցին ժամանակի գրական ուղղությունների եւ ազդեցությունների հետ: Միամանթոն համարվում է հայկական սիմվոլիզմի սկզբնավորողը: Ազգային եւ եվրոպական ժամանակակից արվեստի խաչածեման հողի վրա ակնառու է դառնում սիմվոլիզմի հայկական դպրոցի ձեւավորումը, որ բնութագրվում է գեղարվեստական մեծ բովանդակությամբ եւ գրական ուրույն տեխնիկայով, դրամատիկ քնարականությամբ ու ամենակարեւորը՝ ազգային ճակատագրի փիլիսոփայությամբ: Միամանթոն գրական այս նոր էտապի առաջին խոշորագույն ներկայացուցիչն էր: Նրա ստեղծագործության ողբերգական շիկացումը եւ հույզերի մեծ խտացումը ստեղծում է խոսքի շեքսպիրյան թափ եւ պոեզիայի նարեկյան շնչառություն:

Միամանթոն նաեւ տաղաչափական արվեստի նորարար է հայ պոեզիայում: Իր կիրառած ազատ ոտանավորով նա թարմացրեց հայ պոեզիան՝ նրա ներքին համակարգը դնելով անսահման կապերի ու բազմանշանակ գուգորդումների բարդության վրա: Նրա բանաստեղծական մտքերն ու գաղափարները չէին ունենա այն հուժկու զորությունն ու ներգործուն ազդեցությունը, եթե նա չընտրեր տաղաչափական որեւէ կանոնի չենթարկվող ազատ բանաստեղծական տողերը: Իր բանաստեղծական առաջին շարքերին հատուկ հոետորությունից, վերամբարձությունից աստիճանաբար գնում է դեպի ոճի պարզություն եւ ոճական որոշ հնարներով դիմում ժողովրդական մտածողությանը: Նրա պոեզան տարբերվում է իր ծայրաստիճան լարվածությամբ, դրամատիկ վիճակների պատկերավոր վերարտադրությամբ:

Ըստ էդուարդ Ջրբաշյանի՝ «Միամանթոն ստեղծեց մի ուրույն բանաստեղծական ժանր, որն ուղղակի իմաստով ո՛չ պոեմ է, ո՛չ էլ քնարերգություն, բայց ներառում է լիրիկայի բարձր հուզականությունն ու լարվածությունը, հեղինակային հայացքի անմիջականությունը, կրքոտությունը, իսկ էպիկական պոեզիայից վերցնում է ընդգրկումների լայնությունը, կոմպոզիցիոն միասնությունը, սյուժետային բազմազատարրեր»:<sup>1</sup>

Իսկ Միամանթոյի բանարվեստի նոր ուսումնասիրողները գտնում են, որ այն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հայ գրականության գեղարվեստական որոնումների բովանդակությունը բացահայտելու տեսանկյունից. նա հայ գրականության հարուստ փորձի մեջ բեկեց ժամանակակից գրական շարժման միտումները, խորհրդապաշտական գրականության նվաճումները՝ ստեղծելով արվեստի մի նոր փիլիսոփայություն, հայտնաբերելով գեղարվեստական պատկերի կառուցման միանգամայն նոր օրենքներ:

Միամանթոյի «Դյուցազնորենը». ոճը եւ պատկերավորման արվեստը Միամանթոյի բանաստեղծական սկիզբը նշանավորվեց 1902թ. Փարիզում լույս տեսած բանաստեղծությունների առաջին ժողովածուով՝ «Դյուցազնորեն» գրքով:

Բանաստեղծական այս սկզբին արձագանքեց Դ.Վարուժանը. «Քերթողը նախ կուտար մեզի «Դյուցազնորենը»>1: Այն հանդիսացավ Միամանթոյի ստեղծագործության նախերգանքը, որը, ըստ Ս.Սարինյանի, գաղափարի ընդհանուր-փիլիսոփայական հայտնություն էր, որ պիտի գտներ ժամանակի ու տարածության կոնկրետ հանգրվանը: Իսկ Վարուժանը շարունակում էր իր ասելիքը. «Աստղ մեջ հայրենիքի տառապանքեն ավելի հեղափոխությունը կերգե: Նկարագրությունն է ան նվիրումի մը, ճակատամարտի մը եւ հաղթանակի մը»>: «Դյուցազնորենի»> հեղափոխական պաթոսի արտահայտությունը տալիս է նաեւ Կ.Սասունին. «Դյուցազնորեն» քերթողական գրքին մեջ հայ հեղափոխության խոյանքը դյուցազներգված է, տալով հույսի ճամփան, Աստվածացումը, Արշալույսները, Ճակատամարտը, Հաղթանակեն հետո, Հանգրվանը եւ Վաղորդայնը, որոնց մեջ կփայլի Միամանթոյի մեծ երեւակայությունը եւ լայն հորիզոններ ընդգրկող պատկերացումը»>2:

Ու անոնք, հսկայաձեւ ռահվիրաները մարմարեղեն հույսին, Ըմբոստացումներու ապառաժներեն իրենց ճակատներն արյունած, Բայց աչվըներեն անասելի արհավիրք մը արձակելով

Ու իրենց փշրող ակռաներուն տակ հրաշեկ դաշույններ տրորելեն՝ Ավերակներու քառուղիի մը վրա այս իրիկուն,

Դժգոնությանս հետ երես երեսի, ինծի ըսին...

Օտար ավերում բանաստեղծը իր մեջ կրում է հայկական ամբողջ ազատամարտը, մարմնով այնտեղ է, բայց էությանբ ապրում է հայության «արյան պատարագը»>, թղթին հանձնում իր ներքին ամբողջ սարսափը, վրեժխնդրությունը, ընդվզումն ու խանդավառությունը: Իր ապրումները խորունկ հարազատություն ունեն իր հետ եւ այնքան իրական են, որքան «կրակն ու արյունը մեր լեռների վրա»> Այսինքն՝ Միամանթոյի ստեղծագործության հեղափոխական շունչը բնութագրում է նախ եւ առաջ Միամանթո անհատին: Բանաստեղծ-անհատ ներքին կապը վերլուծում է Մ.Թեղոյանը. «Եթե ցասումն ու ընդվզումը կը վարեն զինք դյուցազնաշունչ իր քերթվածներուն մեջ, այդ աղաղակը հուսաբեկության մը ճիչը չէ սակայն: Անոր ամենեն երկարաշունչ պատկերին ետեւ իսկ՝ կը զգաս հեղափոխականը, որ հավատք

ունի վաղվան հաղթանակի մասին, եւ երբ ակոռ կը կճրտե, հոգեւին ուխտ մը կ'որոճա>>1

Ընթատացողներու ամբոխը մեր առավոտին մեջէն խելահեղորեն կ'հառաջանար Դեպի բախումները նորանոր եւ նպատակը սրբազան...

...Մեր ամենուն փրկությանը համար

Այնչա՛ փ այլասիրորեն արյունելով անմահացաք,

Ու անցաք Իդեալին գագաթներէն, ազատարար խոյանքներով...

Այն բանին, որ Սիամանթոն այդպէս էր ծնվել իր մտածողությամբ, ապացույց են նրա բանաստեղծական քերթվածքները: Այդ մտածողությունից սկիզբ է առնում արտասովոր երեւակայություն, որ դառնում է նրա ստեղծագործության ոճի ամենայնօրինակ հատկանիշը: <<Երեւակայությունը Սիամանթոնի տաղանդէն ամենէն տիրական գիծն է: Ան իրերը եւ դեպքերը բոլորովին նոր եւ ինքնահատուկ ձեւով մը կը դասավորե եւ կը գունագեղե>>,- գրում է Վարուժանը2: Ահա՛ Ու երբ լուսինը եղերականորեն դեպի երկինք կամբառնար Խավարներուն անդունդները իր հրդեհներն անտառելէն՝ Հանկարծ՝ հորիզոնին վրա, Ուրվական մը, Թերեւս արքա մը՝ մեր հին փառքի օրերէն.

...Կույր աստվածի մը հանդիսավորությանը համեմատ, ծանրադեմ, ըսավ...

Կ.Սասունին նշում է բանաստեղծի երեւակայության սահմանները. <<Բանաստեղծը երեւակայության անդունդներու վրայէն սավառնելով, իր թռիչքին ծիրը կը վերջացնէ հաջողությամբ>>1: <<Դյուցազնորեն>> գիրքը կարծես ռոմանտիկական հյուսվածքով քնարական-էպիկական պոեմ է, որի բնորոշ եւ տարբերիչ հատկանիշներից մէկը՝ բանաստեղծական հռետորությունն է. <<Երեւակայության միացած գաղափարականը՝ հռետորությունը կը ծնի. երեւակայությանը միացած զգացումը կը ծնի վսեմը:

Յարճանյանի արվեստը արդյունք է այս երկու գուգավորումներուն>>2:

Սիամանթոնի երեւակայությունը դառնում է նրա ստեղծագործության սնման ներքին աղբյուրը, ուստի Մ.Թեոլոյանն այն համարում է ցայտուն արժանիք եւ բերում Սիամանթոնի ստեղծագործական երեւակայության եւ հռետորության միջեւ եղած աղերսը. <<Ստեղծագործության ցայտուն արժանիքը Սիամանթոնի, իր երեւակայությունն է՝ որ զինք ատակ կը դարձնէ աղմկալի բառերու խոնումով մը կամ ճիգով ոտքի պահված նախադասություններն իսկ փրկելու չոր հռետորութենէ...

Որքան ալ խորունկ ըլլա մեր հիացումը իր գործին հանդէպ, չենք կրնար չարձանագրել սակայն այն իրողությունը՝ որ քերթող Սիամանթոնի լեզուն առաջադրված ճիգով մը կը գագաթանա, - ներխուժություն ու թափ կը ստանա: Բեմական հռետորությունը չէ ասիկա, սակայն՝ քերթողական հռետորությունն է, որ, գրական վերլուծումի պարագային, համեմատաբար անտեսանելի թերություն մը կը դառնա, անոր մեծ առավելություններուն քով>>3: Ճիշտ այսպիսի կողմնորոշում ունի նաեւ Կ.Սասունին՝ միաժամանակ առաջ քաշելով հռետորության եւ արտահայտության խնդիրը...

<<Հռետորությունը որ կա Սիամանթոնի գրվածքներուն մեջ, անհրաժեշտ տարր մըն է իր մշակած նյութերու արտահայտության համար: Այդ հռետորականությունը արվեստի սահմանէն անդին անցած չէ՝ բեմասացություն դառնալու համար: Ճիշտ է,



կան քանի մը քերթվածներ, որոնց մեջ հռետորությունը ծանր կը կշռե , սակայն քանի մը օրինակին անդին չանցնիր>>4: Այս տեսակետով էլ նա գնահատում է <<Դյուցազնորեն>> շարքը՝ նշելով պատկերավորման արվեստի մի յուրահատկությունը. <<Դյուցազնորեն քերթվածներու պատկերները ցնցող են եւ մարտական եւ վիպապաշտ թելադրանքներ կը բերեն ընթերցողներուն: Ասոնք Միամանթոյի ամենէն հռետորական գրվածքներն են, որոնք եթէ մասամբ մը կը տուժեն իրարհաջորդ հռետորական կուտակումներէ, սակայն նույն այդ հռետորական շունչէն դյուցազներգական ու մարտական շքեղություն մը կը զգենուն եւ կը դառնան մշտափարթամ քերթվածքներ>>1:

Այսպիսով՝ <<Դյուցազնորենը>> հայտարարեց նոր ոճի սկիզբ( չնայած որ բանաստեղծի նոր ոճը ի հայտ եկավ դեռէս նրա առաջին քերթվածում՝ <<Կոտորած>> վերնագրով, որը լույս տեսավ 1898թ. <<Վաղվան ձայնը>> թերթում եւ հետագայում <<Մահվան տեսիլ>> վերանվանմամբ բացեց <<Հոգեվարքի եւ հույսի ջահեր>> շարքը): Որպէս սկիզբ՝ <<Դյուցազնորեն>> ժողովածուն, անշուշտ, ուներ նաեւ թերություններ: Այս առումով մի շարք նուրբ դիտարկումներ է կատարում Արշակ Չոպանյանը: Քննադատը նախ սկսում է ազդեցություններից: Նրա կարծիքով, մինչ <<Դյուցազնորենը>> մի շարք թերթերում տպագրված բանաստեղծությունները <<ի հայտ բերած էին ջղուտ ու նուրբ արվեստագետ մը, որուն մեջ սակայն հզոր ու որոշ ինքնություն մը կպակսեր տակավին>>2, քանի որ այդ շրջանում Միամանթոն գտնվում էր Մետեոլինկի եւ Վերհարնի ազդեցության տակ: <<Դյուցազնորենում>> արդէն <<Յարձանյան ի վեր կհանէ ներշնչում մը բացարձակապէս անձնական>>, իսկ իր սիրած վարպետների ազդեցությունն ըստ Չոպանյանի՝ դրսևորվում է միայն ձեռի մեջ: Նա անդրադառնում է ոճի թերություններին՝ բռնազբոսիկ եւ արհեստական կողմերին. <<Հղացումը ամբողջական է եւ ներդաշնակ, բայց արտահայտությունը կդադարի երբեմն հղացումին վեհությանը համազոր մնալէ: Ոճը, խրոխտ գեղեցկություններու մոտ, ունի տեղ տեղ տափակություններ կամ բռնազբոսություններ: Երգին հրեղեն խոյանքը մերթ կընդհատվի ու կպաղի փաստաբանական պերճախոսությունէ կարծես քաղված ասպէս տողերով. <<Ու հետո, ու մանավանդ, ըլլալու համար Ա՛ն, որ պետք է ըլլալ վերջապէս...>>3: Չոպանյանը Միամանթոյի լեզուն համարելով առողջ եւ հարուստ աշխարհաբար՝ գտնում է քերականական խորթ ձեւեր(<<գիտես որ պետք է բաշխվիլ անկէ>>) եւ ֆրանսաբանություններ(<<քայկիդ վրա նորեն վերադարձիր>>): <<Դյուցազնորենը>> իրականության ռոմանտիկական արտացոլումն է՝ արտասովոր սյուժեների, խոշորացված պատկերների, ահասարսուռ, գերբնական ձեւերի ստեղծմամբ: Պատկերավորման այս կողմերի եւ ընդհանրապէս մեր քննելիք նյութի հետ կապված՝ Չոպանյանը <<Դյուցազնորեն>> գրքի թերություն է համարում մի շատ կարեւոր յուրահատկություն՝ գաղափարի ու դրա համապատասխան ձեռի համադրությունը, ավելի լայն իմաստով՝ պոեզիայի եւ իրականության փոխհարաբերությունը. <<Աններդաշնակության տարր մը կներկայացնէ վերջապէս այն ծայրահեղ անհամեմատականությունը, որ երբեմն դուրս կցատքէ բանաստեղծին պատկերացումին եւ իրականության միջեւ, եւ հուր պակասությունը ձեռին մեջ չէ

միայն, այլև հղացումին մեջ>>1:

Այս խնդրի լավագույն մեկնաբանողը կրկին Հր. Թամրազյանն է: Նա գտնում է, որ Միամանթոն՝ որպես ռոմանտիկ քանաստեղծ, կյանքի երեւոյթները, պայքարի դրվագները, տառապանքն ու հերոսությունը տեսնում է պայծառացած ու խոշորացած, որը, ըստ Չոպանյանի, մեր ազգային շարժման ու պայքարի պատկերացումը լինելով, չի համապատասխանում իրականությանը: Թամրազյանի համոզմամբ՝ Չոպանյանը անտեսում է <<Դյուցազնորենի>>՝ որպես քնարական պոեմի ոճական ու գաղափարական յուրահատկությունը՝ պայմանավորված գրողի ընդհանուր գաղափարաբանությամբ ու նախասիրած գրական մեթոդով:

Չոպանյան քննադատը կանգ է առել նաև <<Դյուցազնորենի>> գրքի տաղաչափության վրա, քանի որ այն Միամանթոյի բերած նոր ոճի կարեւոր հատկանիշներից էր: Գիրքը համարելով որևէ տաղաչափական կանոնից զուրկ եւ առնչություն չտեսնելով իր նախասիրած հեղինակների <<ազատ ոտանավորի>> հետ՝ միաժամանակ նշում է, որ այդ քերթվածքները հիշեցնում են Մետեռլինկի մի քանի հատվածները՝ որպես <<երգեցիկ արձակ>>: Այսուհանդերձ, Չոպանյանը տալիս է իր բարձր գնահատականը. <<Դյուցազնորենը>> անենեն հզոր տեսիլքներեն մինն է, զոր հայ միտք մը հղացած ու պղնձի մեջ քանդակած ըլլայ>>2:

Եթե կուգես Տառապանքը դստերուն համար քանդակե.

Բայց մի մոռնար, Անոր աչվըներն ու բերանը ու հոգին տարփորեն,

Ընդվզումի ստինքներուն կարկառելու...

Բազմաթիվ են նման քանդակապատկերների հասնող տողերը: Դյուցազնական բովանդակությունն էլ ազդել է գեղարվեստական ձևի վրա, եւ քանաստեղծական մեծ ուժի է հասնում պատկերավոր մտածողությունը: Պատկերները զարգանում են հարաձուլ գեղեցկությամբ, քանաստեղծական անսպասելի գյուտերով, գեղարվեստական կուռ տրամաբանությամբ.

Ու ահավասի՛կ, ձեր հոգիները կճանչնամ ձեր ճակատներուն բոցեն,

Ու ցեղիս արյունին ձեր մեջ եռալը երջանկորեն մտիկ ըրի...

Գիտեմ ձեր ցավը, որուն մոլեգին ծնունդն է ձեր ըմբոստացումն այսօրվան...

<<Դյուցազնորենը>> նորովի բացեց արտասովոր, տարօրինակ, երբեմն էլ անըմբռնելի քանաստեղծական աշխարհ: Եվ կարելի է ասել, որ ընդհանրապես բոլոր ժամանակների համար նոր է Միամանթոյի քանաստեղծական մտածողությունը, քանի որ նա հազվագյուտ ծնունդ էր իր մտածողությամբ: Սրանով նա բերեց պատկերման նոր համակարգ, նոր հնարներ ու որակներ եւ իր պատկերավորման արվեստը հասցրեց ինքնատիպ կատարելության: Միամանթոն ընդլայնեց բառի գեղարվեստական ու իմաստային հնարավորությունները, նրանում արթնացրեց նոր նրբերանգներ: Այս երեւոյթի ավելի կոնկրետ մեկնաբանությունը տալիս է Ս.Սարինյանը. <<Յարձանյանն իրականը փոխազրեց երեւակայության ոլորտը առարկաներն ու երեւոյթները ընկալեց իբրեւ սիմվոլներ, հասկացությունների կոնկրետ իմաստը բարձրացրեց ընդհանուր խորհրդանիշի>>1: Այսինքն՝ <<Հույս>>, <<Տառապանք>>, <<Մահ>>, <<Իդեալ>>, <<Գաղափար>>, <<Արշալույս>>,

<<Հաղթանակ>>, <<Սեր>>, <<Ատելություն>>, <<Խենթություն>>, <<Ըմբոստացում>>, <<Ստրկության քաղաքներ>>, <<Նպատակը սրբազան>> եւ այլ վերացական հասկացություններ նրա բանաստեղծական պատկերների համակարգում ձեռք են բերում առարկայական կոնկրետ իմաստ եւ վերաճում գաղափար-սիմվոլների՝ <<...հսկայաձեւ ռահվիրաները մարմարեղեն Հույսին>>, <<Դեպի Հույսին բացաստանները պիտի քաշեն>>, <<Դուք օրենքը եղաք եղեռնապաշտ Չարիքին ուսերուն վրա հսկող>>, <<Ադամանդյա արգաստվոր Արշալույսները կարորեն>> եւ այլն:

Միամանթո բանաստեղծի առանձնակի հետաքրքրություն ներկայացնող բանաստեղծական արվեստի ուսումնասիրողները արդեն նկատել են, որ հատկապես <<Դյուցազնորեն>> գրքի բառապատկերային համակարգում զգալի է գոյականների եւ նյութական իմաստ ունեցող մակդիրների խտություն: Բայերը սակավաթիվ են, գերակշռում է դրանց դերբայական կիրառությունը, մի բան, որ մեծ չափով ձգում, դանդաղեցնում է շարժումը (արյունած, կարկառած, ձգտելով, արձակելով եւ այլն): Դրան նպաստում է նաեւ շարունակական շարժում արտահայտող մակբայների առատությունը (հավերժապես, անխոնջորեն, խելահեղորեն, անհունորեն եւ այլն):

# Եզրակացություն

Ստեղծվում է առարկայական պատկերի դանդաղ հերթագայություն՝ մաս առ մաս, առանձին հատվածներով, անվերջ ու անսկիզբ, շարունակվող մի շարժում:

Այսպիսով, <<Դյուցազնորեն>> գիրքը՝ որպես լավ սկիզբ, իր արժանիքներով եւ թերություններով, նախապատրաստում է բանաստեղծական հաջորդ շարքերը. թերությունները աստիճանաբար վերածվում են արժանիքների, իսկ արժանիքները նոր որակներ են ձեռք բերում:

Ի վերջո Միամանթոյի պոեզիայի բարձրագույն արժեքը ողբերգության արտահայտման ուժի մեջ է: Նրա քնարը մեր ժողովրդի հավաքական հոգին արտահայտող ճիշն էր, որ եկավ նոր ձեռով, նոր թափով, նոր պատկերներով <<արձանացնելու բանաստեղծին հոգեկան փոթորկումները>>, որ միեւնոյն ժամանակ հայ ազատատենչ ամբողջ երիտասարդության ապրումներն էին: Միամանթոյական այս մեծ թեմայի ընդհատված ճանապարհը շարունակվելով գնում է դեպի Չարենց:

Նա հող էր հայցում՝ խավարին  
կարկառած ձեռքով իր քարե,  
Եվ լույս էր հայցում խավարից՝  
իբրեւ դեղ աչքերին իր կույր,-  
Եվ մահու պես գունատ շրթերով  
շնչում էր բառեր մարմարե,  
Երագում էր խոնջենք ու արեւ  
եւ սիրո աղբյուրներ մաքուր...

«Մահվան տեսիլ»

Այսպիսով՝ Միամանթոյի պոեզիայի եւ արվեստի հետ շփումը մեկ անգամ եւս ապացուցում են, որ մենք գործ ունենք վերին աստիճանի ինքնատիպ հանճարի բանաստեղծական մեծ աշխարհի հետ, եւ անհասանելիությունը որոշ չափով կաշկանդում է մեզ ու երբեմն մղում լռությամբ մտորելու այս անսահմանության առաջ:

## Գրականության ցանկ

1. Ա. Չոպանյան. ՀԴԳ, Երկեր, Երևան, 1988:
2. Դանիել Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու երեք հատորով, հատոր 3, Երևան 1987:
3. Էդուարդ Ջրբաշյան, Թումանյանի պոեմները, Երևան 1986:
4. Կարո Սասունի, Պատմություն արեւմտահայ արդի գրականության, Բեյրութ, 1951:
5. Հայ նոր գրականության պատմություն, ԳԱ, Երևան, 1979:
6. Հրանտ Թամրազյան, Սիամանթո, Երևան 1964:
7. Հ. Մեսրոպ Վ. ճանաչյան, Ծաղկաքաղ արդի հայ գրականության, Վենետիկ, 1963, հ. II:
8. Մինաս Թեղույան, Դար մը գրականություն, Կահիրե, 1955:

